ՂԵՆԻՆՅԱՆ «ՎՊԵՐՅՈԴ»ՈՒ «ՊՐՈԼԵՏԱՐԻ» ԹԵՐԹԵՐԻ ՄՆՈՒՆԴԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՄՈՒՏՔԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

Հ. Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՌՍԴԲԿ 2-րդ համագումարից հետո կուսակցության ներսում պայքարը բոլշևիկների և մենշևիկների միջև բորբոքվեց նոր ուժով։

1903 թ. սեպտեմբերին Ժնևում, գաղտնի կերպով, հրավիրվում է 17 մենշևիկների խորհրդակցություն, որին Անդրկովկասից մասնակցում էին Ն. Ժորդանիան և Դ. Թոփուրիձեն։ Խորհրդակցությունը ստեղծում է հակակուսակցական կենտրոն՝ մենշևիկյան բյուրո, որի կազմի մեջ են մտնում Մարտովը, Աքսելրոդը, Պոտրեսովը, Դանը և Տրոցկին։ Մենշևիկների պառակտիչ գործունեությունը իր նոր արտահայտությունը ստացավ 1903 թ. հոկտեմբերին Ժնևում հրավիրված «Ռուս հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի արտասահմանյան լիգայի»[1] 2-րդ համագումարում։ Վ. Ի. Լենինը հանդես գալով համագումարում, հակահարված տվեց Մարտովին ու նրա կողմնակիցներին, որոնք «Լիգայի» համագումարն օգտագործում էին բոլշևիկների դեմ զրպարտանքի կամպանիա ծավալելու համար։ Վճռական բողոք հայտնելով մարտովականների նման վարքագծի դեմ, Վ. Ի. Լենինը, բոլշևիկ պատգամավորները հեռացան համագումարից։

Ոտնահարելով կուսակցության 2-րդ համագումարի որոշումը, Գ. Վ. Պլեխանովը պահանջեց «Իսկրա»-ի խմբագրության կազմի մեջ մտցնել բոլոր հին մենշևիկ խմբագիրներին։ Վ. Ի. Լենինը անհնար էր համարում համաձայնել դրան և հոկտեմբերի 19-ին հայտարարեց «Իսկրա»-ի խմբագրությունից իր դուրս գալու մասին։

Այսպիսով, Կենտրոնական օրգանը 52-րդ համարից անցավ մենշևիկների ձեռքը։ Վ. Ի. Լենինը «Իսկրա»-ի խմբագրությունից իր դուրս գալու հանգամանքների մասին հատուկ հոդված գրեց՝ «Ինչու ես դուրս եկա «Իսկրա»-ի խմբագրությունից»[2]։

---

1 «Ռուս հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի արտասահմանյան լիգան» ստեղծվել է 1901 թ. նոյեմբերին իսկրայականների կողմից։ 1903 թ. ՌՍԴԲԿ 2-րդ համագումարը լիգան ճանաչեց որպես կոմիտեի իրավունքներ ունեցող և ՌՍԴԲԿ Կենտկոմի կողմից ղեկավարվող արտասահմանյան միակ կազմակերպությունը։ Մենշևիկների կողմից կուսակցության կենտրոնական հիմնարկների, այդ թվում նաև «Ռուս հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի արտասահմանյան լիգայի» զավթումը բոլշևիկներին ստիպեց ունենալ ինքնուրույն արտասահմանյան կազմակերպություն։ 1905 թ. մարտին ստեղծվեց ՌՍԴԲԿ-ի բոլշևիկների արտասահմանյան կազմակերպությունը։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 135—144։ Այս հոդվածը Լենինը ուղարկում է «Իսկրա» խմբագրությանը որպես բաց նամակ, թերթի № 53-ը լույս տեսնելուց անմիջապես հետո, սակայն նոր, մենշևիկյան խմբագրությունը հրաժարվում է այն տպագրել։ Նամակը տպագրվում է առանձին թերթիկով՝ արտասահմանում և Ռուսաստանում։

Բաքվի կոմիտեն նույնպես տպագրում է Վ. Ի. Լենինի այս հոդվածը և «Նամակ ընկերոջը մեր կազմակերպական խնդիրների մասին» բրոշյուրը։

Մոտավորապես նոյեմբերի 20-ին Վ. Ի. Լենինը կոոպտացիայի ենթարկվեց Կենտկոմի կազմում[3]։ Նա Կենտկոմ մտցրեց հայտարարության մի նախագիծ, որտեղ բողոքում էր Գ. Պլեխանովի կողմից նախկին մենշևիկ խմբագիրներին «Իսկրա»-ի խմբագրության մեջ կոոպտացիայի ենթարկելու դեմ։ Բացի Վ. Ի. Լենինից, Կենտկոմի մյուս անդամները՝ Վ. Ա. Նոսկովը, Լ. Ե. Գալպերինը, Լ. Բ. Կրասինը հաշտվողաբար էին տրամադրված մենշևիկների պառակտիչ գործունեության նկատմամբ։

Վ. Ի. Լենինը մենշևիկների դեմ տիտանական պայքար էր մղում նաև կուսակցության խորհրդում, որտեղ նա մտնում էր որպես Կենտկոմի ներկայացուցիչ։ Այդ պայքարն այնտեղ հասավ, որ Լենինը ստիպված էր հեռանալ խորհրդից։ «Կուսակցության խորհուրդն,— գրում է Վ. Ի. Լենինը,— այժմ ուղղակի կեղծում է կուսակցության հասարակական կարծիքը և նրա որոշումը...»[4]։

Հուլիսի վերջին Կենտկոմի մյուս անդամները, առանց Լենինի, ընդունեցին մի որոշում, որը պատմության մեջ է մտել «Հուլիսյան դեկլարացիա» անունով։ Այդ որոշմամբ արգելվում էր անհապաղ համագումար հրավիրելու համար տարվող ագիտացիան, իսկ Լենինը զրկվում էր Կենտկոմի արտասահմանյան ներկայացուցչի իրավունքներից։ Արդեն 1904 թ. հուլիսին մենշևիկներին հաջողվեց զավթել նաև Կենտկոմը։

Մենշևիկների և բոլշևիկների միջև ծավալվող սուր պայքարը իր արտացոլումն է գտնում նաև տեղական կուսակցական կազմակերպություններում։ «Ներկայումս,— գրում է Վ. Ի. Լենինը,— մենշևիկները Ռուսաստանում ամենուրեք տեղական կազմակերպությունների պառակտում են առաջ բերում»[5]։

2-րդ համագումարի պատգամավոր, մենշևիկ Դ. Թոփուրիձեն արտասահմանից վերադառնալով Թիֆլիս, ձգտում էր խաթարել այն վստահությունը, որ տեղական կազմակերպությունները տածում էին դեպի ՌՍԴԲԿ 2-րդ համագումարի որոշումները։ Նա հայտարարում էր, թե իբր համագումարը արհամարհել է ազգային հարցը, արգելել է տեղական լեզուներով ագիտացիոն գրականության, ինչպես նաև Կովկասյան միության «Պրոլետարիատի կռիվ» թերթի հրատարակությունը[6]։ Զրպարտության և պառակտիչ գործունեության համար Կովկասյան միութենական կոմիտեն զրկում է Թոփուրիձեին միութենական կոմիտեում աշխատելու իրավունքից[7]։

Անդրկովկասում մենշևիկների պառակտիչ գործունեության, ինչպես նաև Թոփուրիձեի նկատմամբ կիրառված միջոցների մասին Վ. Ի. Լենինը իմանում է Կովկասյան միության անդամների նամակներից և մանավանդ Բ. Մ. Կնունյանցի հաղորդումից։ Վ. Ի. Լենինը 1903 թվականի հոկտեմբերի 20-ին իր և Գ. Պլեխանովի (Պլեխանովը այդ ժամանակ դեռևս ընթանում էր բոլշևիկների հետ) անունից ՌՍԴԲԿ Կովկասյան միությանը հասցեագրած նամակում գրում է. «Թանկագին ընկերներ։ Մենք ձեր գործերի մասին տեղեկություն ստացանք

---

3 Տե՛ս Վ. Ի. Լենին, Կենսագրություն, Երևան, 1961, էջ 141։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 639։

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 150։

6 «Ленинский сборник», VII, стр. 117.

7 Տե՛ս Очерки истории коммунистических организаций Закавказья. Часть первая, Тбилиси, 1967, стр. 91.

թե՛ Ռուբենից անձնապես և թե՛ Ռաշիդ-բեկից[8] գրավոր։ Մենք կարող ենք միայն ողջունել ձեր որոշումը Իսարին[9] ժամանակավորապես հեռացնելու մասին մինչև գործի քննությունը Կենտրոնական կոմիտեի կողմից...

Թող Կովկասի ընկերները հաստատորեն ընթանան այն ուղիով, որի վրա նրանք կանգնել են ... Մենք համոզված ենք, որ այժմյան պարտիական «խառնակությունը» արագորեն կվերանա»[10]։

Լենինի ցուցումով, հենց նույն օրը՝ հոկտեմբերի 20-ին, Ն. Կրուպսկայան Կիև, Կենտկոմին հասցեագրում է հետևյալ նամակը. «Անհապաղ որևէ մեկին ուղարկեցեք Թիֆլիս։ Բանը նրանումն է, որ այնտեղ օպոզիցիա է սկսվում, և մերոնք խնդրում են Կենտկոմից որևէ մեկին ուղարկել Կովկասյան կոմիտեների համագումար»[11]։ Կենտկոմի ներկայացուցիչը, սակայն, չհասցրեց ներկա գտնվել Կովկասյան միության 2-րդ համագումարին։

Համագումարին մասնակցում էին Կովկասյան միութենական, Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի, Իմերեթ-Մինգրելիայի կոմիտեների ներկայացուցիչները։ Համագումարն ընթացավ սուր պայքարի մթնոլորտում։ Հակառակ մենշևիկների բոլոր ջանքերի, ձայների ճնշող մեծամասնությամբ հավանություն տրվեց ՌՍԴԲԿ 2-րդ համագումարի որոշումներին։ Համագումարը դատապարտեց մենշևիկների գիծը և կոչ արեց կուսակցության բոլոր անդամներին՝ պայքարել կայուն միասնության համար։ Համագումարը իր որոշումներում նշեց, որ Կովկասյան միությունը հանդիսանում է ՌՍԴԲԿ անբաժան մասը և իր գործունեության մեջ ենթարկվում է կուսակցության գերագույն օրգաններին։

Կազմակերպական հարցերում ևս համագումարը գտնվեց լենինյան դիրքերում, Կովկասյան միութենական կոմիտեի կազմում ընտրելով գերազանցապես բոլշևիկների։ Այսպիսով, Կովկասյան միության ղեկավարությունը իրենց ձեռքը գցելու և միությունը բոլշևիզմի գծից շեղելու մենշևիկների փորձերը լիովին ձախողվեցին։ Այդ բանը ստիպված էր խոստովանել նույնիսկ մենշևիկյան «Իսկրան»[12]։

Ինչպես ամբողջ կուսակցության, այնպես էլ երկրում տիրող իրավիճակը հրամայաբար պահանջում էր ընդլայնել տպագիր պրոպագանդան։ ՌՍԴԲԿ Կովկասյան միության 2-րդ համագումարի որոշմամբ վրացերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով սկսեց լույս տեսնել «Պրոլետարիատի կովի» թերթիկը»։

Պայքարը բոլշևիկների դեմ գնալով ավելի էր սրվում, «...պայքար, որ ամբողջովին մղվում է պառակտման ամենաանամոթ միջոցներով ու եղանակներով՝ միաժամանակ կեղծավորաբար պառակտումը ողբալով կուսակցության այսպես կոչված 40-ում»[13]։

Վ. Ի. Լենինը բոլշևիկներին կոչ էր անում վճռականորեն կապերը խզել մենշևիկների հետ և անհապաղ հրավիրել կուսակցության 3-րդ համագումարը։ «...Կենտրոնները,— գրում էր նա,— իրենց դրին կուսակցությունից դուրս։ Միջին ճանապարհ չկա. ո՞վ է կենտրոնների կողմը, ո՞վ է կուսակցության կողմը։ Ժամանակն է սահմանազատվել»[14]։ Մենշևիկյան Կենտկոմը բոլշևիկյան

8 Ռուբենը Բ. Կնունյանցն է, իսկ Ռաշիդ-բեկը՝ Արշ. Զուրաբյանը։

9 Խոսքը Դ. Թոփուրիձեի մասին է։

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 198—199։

11 «Ленинский сборник», VII, стр. 116.

12 Տե՛ս «Իսկրա» № 53, 25 նոյեմբերի 1903 թ.։

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 677։

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 63։

գրականությունն արգելել էր տպագրել կուսակցության տպարաններում։ «Նոր Կենտկոմը... ուղղակի դուրս քշեց մեր բրոշյուրները (և նույնիսկ արդեն շարված բրոշյուրների շապիկները) կուսակցական տպարանից, այսպիսով, վերջինը վերածելով խմբակային տպարանի»[15]։

Վ. Ի. Լենինը վճռականորեն կոչ էր անում բոլոր տեսակի կապերը խզել մենշևիկյան Կենտկոմի և Խորհրդի հետ։ «Եթե մենք չխզենք կապերը Կենտկոմի և Խորհրդի հետ, ապա մենք արժանի կլինենք միայն այն բանին, որ բոլորը թքեն մեր երեսին»[16]։

Կուսակցության և կուսակցականության համար մղվող պայքարում Լենինը առանձնահատուկ նշանակություն էր տալիս բոլշևիկյան թերթի ստեղծմանը, և Ռուսաստանում գտնվող ընկերներին նա այդ մասին գրում է. «Ամբողջ էությունը այժմ այդ օրգանի մեջ է, առանց դրա մենք գնում ենք դեպի հաստատ, անփառունակ մահ։ Ինչ էլ որ լինի հարկավոր է անհապաղ սկսել ... այլապես մենք ինքներս կմորթենք մեզ»[17]։

Վ. Ի. Լենինը անհրաժեշտ էր համարում նախքան թերթի հրատարակությունը սկսելը կազմակերպել ինքնուրույն, բոլշևիկյան ոչ պարբերական գրականության հրատարակություն, որը նյութապես ավելի էժան կլիներ և բացի այդ դրական ուժերի հավաքման ու բացահայտման համար մեծ դեր կխաղար։ Այդպիսի հրատարակություն ունենալը հնարավորություն կտար նաև կապեր հաստատել տեղական կոմիտեների, առաջավոր բանվորների և կուսակցական աշխատողների հետ։ 1904 թ. օգոստոսին ծնվում Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ստեղծվեց այդպիսի հրատարակչություն, որի լույս ընծայած գրականությունը մեծ ընդունելություն գտավ ՌՍԴԲԿ բոլշևիկյան կոմիտեների կողմից։

1904 թ. դեկտեմբերին Վ. Ի. Լենինը Փարիզում և Շվեյցարիայի մի շարք քաղաքներում հանդես եկավ ներկուսակցական դրության վերաբերյալ ռեֆերատներով, որից ստացված փողը ծախսվեց նոր թերթի ստեղծման վրա[18]։

Վ. Ի. Լենինը առաջարկում էր նյութական բոլոր միջոցները ծախսել միայն թերթի ստեղծման վրա։ «Կրկնում եմ. առաջին հերթին պետք է ընթանա օրգանը, օրգանը և օրգանը, փող այլ բանի վրա ծախսելը այժմ վերին աստիճանին անխելքություն է»[19]։

Բոլշևիկյան պարբերական թերթի հրատարակության հարցը վերջնականապես լուծելու համար, 1904 թ. նոյեմբերի 29-ին (դեկտեմբերի 12-ին) ծնվում տեղի ունեցավ բոլշևիկների ժողով, որին մասնակցում էին Վ. Ի. Լենինը, Վ. Վ. Վորովսկին, Մ. Ս. Օլմինսկին, Ն. Կ. Կրուպսկայան և ուրիշներ։ Վ. Ի. Լենինը Ռուսաստան ուղարկած նամակում այդ մասին գրում է. «Այսօր արտասահմանյան բոլշևիկների նեղ շրջանի ժողովում վերջնականապես վճռվեց վաղուց արդեն սկզբունքորեն լուծված այն հարցը, որ վերաբերում է կուսակցական պարբերական օրգան հիմնելուն՝ նվիրված մեծամասնության սկզբունքների պաշտպանությանն ու զարգացմանն այն պայքարում, որ մղվում է կուսակ-

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 678—679։
16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 308։
17 Նույն տեղում, հ. 34, էջ 306։
18 Տե՛ս Վ. Ի. Լենին, Կենսագրություն, Երևան, 1961, էջ 151։
19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 84, էջ 307։

ցության մեջ փոքրամասնության մտցրած կազմակերպական ու տակտիկական շփոթի դեմ»[20]։

Ժողովը միահամուռ պաշտպանեց Վ. Ի. Լենինի առաջարկը՝ ծնևում բոլշևիկյան շաբաթաթերթ հրատարակել «Վպերյոդ» անունով։ Եվ հենց այս նույն ժողովում էլ հաստատվեց խմբագրության ղեկավար կազմը։ Բացի Վ. Ի. Լենինից, որի վրա դրվեց թերթի գլխավոր խմբագրի պարտականությունը, խմբագրության կազմի մեջ մտան Վ. Վ. Վորովսկին, Մ. Ս. Օլմինսկին, Ա. Վ. Լունաչարսկին։ Թերթի խմբագրմանը մասնակցում էին նաև Վ. Մ. Վելիչկինան (Բոնչ-Բրուևիչ), Վ. Ա. Կարպինսկին, Ն. Կ. Կրուպսկայան և Լ. Ա. Ֆոտիևան[21]։ 1904 թ. դեկտեմբերի 22-ին (1905 թ. հունվարի 4-ին) լույս տեսավ «Վպերյոդ» թերթի առաջին համարը։

«Վպերյոդ»-ը պատմության մեջ մտավ որպես հին «Իսկրա»-ի գործի շարունակող։ «Հանուն հին «Իսկրայի» «Վպերյոդը» վճռականորեն պայքարում է նոր «Իսկրայի» դեմ»[22],— գրել է Լենինը։

Իր «Նամակ ընկերներին (կուսակցական մեծամասնության օրգանի լույս տեսնելու առթիվ)», «ՌՍԴԲԿ-ի պառակտման համառոտ ակնարկ» և մի շարք այլ աշխատություններում Վ. Ի. Լենինը մանրակրկիտ շարադրել է «Վպերյոդի» խնդիրները։

Ռուսաստանի բոլշևիկներին ուղղած վերոհիշյալ նամակում Լենինը գրում է. «ԿՕ-ի խմբագրության[23] հետ իրենց ընկերական հարաբերությունները խզած կոմիտեները... չէին կարող և չեն կարող կառավարվել առանց պարբերական օրգանի»[24]։ «Մենք օրգանը վարելու ենք այն պայմանով, որ այն լինի ռուսական շարժման, և ոչ մի դեպքում արտասահմանյան խմբի օրգանը»[25]։ Դրա համար Լենինը խնդիր էր դնում Ռուսաստանի բոլշևիկների և տեղական կոմիտեների առջև օգնել թերթին թղթակցություններով։ Նա նահանջում էր, որ գրեն ոչ միայն կուսակցական աշխատողները, այլև շարքային բանվորները, որովհետև «Օրգանը կենդանի կլինի ու կենսունակ այն ժամանակ, երբ մի հինգ ղեկավար և շարունակ գրող գրականագետների դիմաց կան հինգ հարյուր և հինգ հազար ոչ-գրականագետ աշխատողներ»[26]։ «Միակ փրկությունը կենդանի կապն է Ռուսաստանի հետ»[27]։

Նա տեղական կուսակցական ղեկավար աշխատողներին խորհուրդ էր տալիս, որ նրանք հորդորեն բանվորներին գրել «Վպերյոդին»։ Ավելի լայն հնարավորություն տվեք բանվորներին գրելու մեր լրագրերում, գրելու բացարձակապես ամեն բանի մասին»[28]։ Խոսքն ուղղելով բանվորներին Լենինը գրում է. «Մենք խնդրում ենք բոլորին և հատկապես բանվորներին թղթակցել»[29]։

Լենինյան այս նամակ-կոչը հասավ նաև Անդրկովկաս։ Բազմաթիվ թղ-

---

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 677։

21 Տե՛ս «Большевистская периодическая печать (1900—1917)», библиографический указатель, М., 1964, стр. 23.

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 149։

23 Նկատի ունի Նոր մենշևիկյան «Իսկրան» խմբագրությունը։

24 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 7, էջ 679։

25 Նույն տեղում, էջ 680—681։

26 Նույն տեղում, էջ 681։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում։

թակցություններ ու նամակներ ուղարկեցին «Վպերյոդի» խմբագրություն երկրամասի կուսակցական աշխատողները, բանվորները, պրոֆեսիոնալ հեղափոխականները, որոնց մի զգալի մասը տպագրվեց։ «Վպերյոդի» ընդամենը 18 համարում մոտ 60 տարբեր բնույթի նյութ է տպագրված Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների, բանվորական ու գյուղացիական շարժումների և ընդհանրապես երկրամասի սոցիալ-քաղաքական ու տնտեսական դրության մասին[30]։

«Վպերյոդը» պատվով կատարեց ոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստի ու ագիտատորի իր խնդիրը, այլև դարձավ կոլեկտիվ կազմակերպիչ։ Վ. Ի. Լենինի ու բոլշևիկների ջանքերով այդ թերթը դարձավ ՌՍԴԲԿ 3-րդ համագումարի հրավիրման համար պայքարի գլխավոր միջոցը։ 3-րդ համագումարի՝ «Վպերյոդի» վերաբերյալ» բանաձևում նշված է թերթի վիթխարի ծառայությունը մենշևիզմի դեմ մղված պայքարում, կուսակցականության վերականգնման, հեղափոխության առաջադրած հրատապ հարցերի պարզաբանման ու լուծման, ինչպես նաև համագումարի հրավիրման գործում։ Այս ամենի համար «համագումարը շնորհակալություն է հայտնում «Վպերյոդի, խմբագրությանը»[31]։

1905 թվականի մայիսի 5(18)-ից «Վպերյոդը» դադարում է լույս տեսնել։

Կուսակցության լենինյան կենտրոնական թերթերի փայլուն համաստեղության հաջորդ օրգանը «Պրոլետարին» է, որը ստեղծվեց ՌՍԴԲԿ 3-րդ համագումարի որոշմամբ[32]։

Կենտկոմի 1905 թ. ապրիլի 27-ի պլենումի որոշմամբ «Պրոլետարիի» պատասխանատու խմբագիր է նշանակվում Վ. Ի. Լենինը։ «Պրոլետարիի» մշտական թղթակիցներն էին Վ. Բոնչ—Բրուևիչը, Մ. Վասիլև-Յուժինը, Ս. Գուսևը, Ռ. Զեմլյաչկան, Պ. Լեպեշինսկին, Մ. Լիտվինովը, Ե. Ստասովան, Ա. Ուլյանովա—Ելիզարովան, Մ. Ցխակայան, Ս. Շահումյանը և ուրիշներ[33]։

«Պրոլետարի» շաբաթաթերթի առաջին համարը լույս տեսավ Ժնևում, 1905 թ. մայիսի 14/27/-ին։

Ինչպես լենինյան մյուս թերթերը, այնպես էլ «Պրոլետարին» հատուկ ուշադրություն էր դարձնում տեղերից ստացված թղթակցությունների տպագրության և դրանց օգտագործման վրա։

Ն. Կ. Կրուպսկայան հիշում է, որ «Պրոլետարիի» ամենօրյա փոստը իր ժամանակի համար և մանավանդ անլեգալ թերթի համար, չափազանց մեծ մասշտաբների էր հասնում։ Առանձին ամիսների ստացվել է մինչև 300 նամակ-թղթակցություն[34]։

---

30 Այդ նյութերը մեր կողմից հրատարակվել են առանձին գրքով՝ «Центральные газеты РСДРП о Закавказье 1905 г.», Ереван, 1965.

31 Տե՛ս ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, առաջին մաս, Երևան 1954, էջ 106։

32 Նույն տեղում։

33 Տե՛ս Большевистская периодическая печать (1900—1917). Библиографический указатель, М., 1964, стр. 37.

34 Տե՛ս Большевистская печать. Краткие очерки истории 1894—1917 гг., М., 1962, стр. 131.

1905 թ. նոյեմբերին Վ. Ի. Լենինի Ռուսաստան մեկնելուց հետո, թերթի վերջին երկու (№ № 25, 26) համարները լույս են տեսնում Վ. Վորոնովսկու խմբագրությամբ, իսկ այնուհետև «Պրոլետարիի» հրատարակությունը դադարում է։

Անդրկովկասը երկրի այն շրջաններից էր, ուր առատությամբ էին ստացվում բոլշևիկյան հրատարակությունները և որի կուսակցական կազմակերպությունները սերտ կապերի մեջ էին անձամբ Վ. Ի. Լենինի[35] ու կենտրոնական թերթերի խմբագրությունների հետ։

1904 թ. նոյեմբերի 9-ին, ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեին հասցեագրված նամակում Լենինը հայտնում է կուսակցական գրականություն ուղարկելու մասին, և միաժամանակ երկրամասի կոմունիստներին առաջարկում է թղթակցություններ ու նամակներ ապահովել նոր ստեղծվող «Վպերյոդի» համար։ Վերջում Լենինը հարցնում է՝ «Իսկ ի՞նչ է արվում Բաթումում։ Ինչպիսի՞ տրամադրություն կա այնտեղ»[36]։

Արտասահմանյան բոլշևիկյան կենտրոնին, նույն թվականի նոյեմբերին, Բաքվից գրում են. «Ձեզ մի խնդրանք։ Անհապաղ ընկեր Լ-ին (Լենինին—Հ. Ի.) ուղարկեցեք հետևյալը. «Զեմլյաչկայի տված հասցեներով նորերս ուղարկվել է կարևոր նամակ, իսկ տարբեր ժամանակներում՝ Բաքվի կոմիտեի բանաձևերը, թռուցիկները և այլն։ Լ.-ի նամակը ստացվել է։ Շուտով կպատասխանենք»[37]։ Վ. Ի. Լենինը ստանալով Կովկասյան միութենական կոմիտեի և Կենտկոմի կովկասյան ներկայացուցչի «Հայտարարությունը»՝ կուսակցության Խորհրդի որոշումների և մենշևիկյան «Իսկրայի» դրանց պաշտպանության մասին[38], 1904 թվականի դեկտեմբերի 4-ին Ն. Կ. Կրուպսկայային գրում է. «Ուղարկում եմ Միութենական կոմիտեի և Կենտկոմի կովկասյան ներկայացուցչի հայտարարությունը... Իմ կարծիքով, դա անպայման պետք է անհապաղ հրատարակել որպես թերթիկ մեր հրատարակության կողմից. այդ բանը արեք անհապաղ և անպայման»[39]։

1904 թ. ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն «Վպերյոդի» հրատարակությանը օգնելու նպատակով ստեղծում է գրական խումբ։ Այդ առթիվ, Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ, Ն. Կ. Կրուպսկայան Կովկասյան միութենական կոմիտեին գրում է. «Մեզ շատ ուրախացրեց Կովկասում «Վպերյոդի» հրատարակությանը աջակցող գրական խմբի ստեղծման մասին լուրը։ Եթե հաղորդակցման գործը լավ դրվի, մեծ բան արած կլինեք։ Մենք մեր կողմից նամակների և թղթակցությունների համար կուղարկենք մի շարք հասցեներ։ Ավելի շատ տեղեկություններ ուղարկեցեք Կովկասի մասին, ճշգրիտ հաշվետվություններ գործերի վիճակի մասին առանձին կոմիտեներում, բոլոր թերթիկները և այլն»[40]։

---

35 Վ. Ի. Լենինի ու Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների սերտ կապի մասին մանրամասն տե՛ս Г. Б. Гарибджанян, В. И. Ленин и большевистские организации Закавказья 1893—1924, Ереван, 1967; К. А. Мамиконян, В. И. Ленин и большевистские организации Закавказья 1893—1907 гг., Ереван, 1961.

36 В. И. Ленин, ПСС, т. 46, стр. 410.

37 «Ленинский сборник», XV, стр. 256.

38 Տե՛ս «Իսկրայի» 73—74 համարի հավելվածը։

39 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 302։

40 «Пролетарская революция», 1925, № 5, стр. 38—39.

Անդրկովկասյան բոլշևիկները սրբությամբ էին կատարում Լենինի հանձնարարությունը և դրում էին թերթին երկրամասում տիրող դրության, իրենց հուզող հարցերի մասին։ Կրուպսկայան իր նամակներից մեկում գրում է. «Այժմ բանվորներից մենք չափազանց շատ նամակներ ենք ստանում, որը մեզ շատ-ու շատ է ուրախացնում»[41]։ Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների և Վ. Ի. Լենինի ու խմբագրության միջև կապը գնալով ավելի էր ամրապնդվում։ 1905 թ. ՌՍԴԲԿ Կովկասյան միության օրգան «Պրոլետարիատի կռիվը» թերթը հայտնում է, որ Անդրկովկասում ստացվել են «Վպերյոդի» առաջին երեք համարները[42]։

Հունվարի 12-ին Յուրին (Ա. Բեկզադյանը) նամակով խնդրում է Վ. Ի. Լենինին շտապ ուղարկել «Վպերյոդի» առաջին համարը, «Զեմստվային կամպանիան և «Իսկրայի» պլանը» բրոշյուրը[43]։

Մի քանի հատված թերթի խմբագրությունից Անդրկովկաս ուղարկված նամակներից.

«Թանկագին ընկեր, փետրվարի 1-ի թվակիր Ձեր նամակը, ինչպես նաև պրոկլամացիաները ստացել ենք... Մի ընկերոջ միջոցով Ձեզ ենք ուղարկել «Վպերյոդի» վերջին համարները»[44]։— Հայտնվում է 1905 թ. մարտի 4-ի նամակում։

«Թանկագին բաերկամներ, մարտ ամսին մենք ձեզանից ստացել ենք 10 նամակ։ Բոլորը կօգտագործվի «Վպերյոդում»։ Ինչպես երևում է աշխատանքը ձեզ մոտ եռում է»[45]։

Թերթի լայն տարածման համար ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն որոշում է ռուսերեն, հայերեն և վրացերեն լեզուներով վերահրատարակել «Վպերյոդը», որի մասին և խորհուրդ են հարցնում Լենինից։ Լենինի հանձնարարությամբ Կրուպսկայան 1905 թ. մարտի 4-ին գրել է. «...Իհարկե շատ ուրախալի կլիներ, եթե «Վպերյոդը» թարգմանվի և վերահրատարակվի Կովկասում. դրա դեմ ի՞նչ առարկություն կարող է լինել»[46]։

Թերթի առաջին համարների տարածումից Անդրկովկասում առաջացած ցնծության մասին է գրում է Ա. Մ. Ստոպանին Լենինին հասցեագրած իր նամակում. «Վպերյոդի» երևան գալու համար մենք, իհարկե, ուրախ ենք և ամեն ինչ կանենք աջակցելու և տարածելու համար ... Մոտ օրերս կուղարկենք մի շարք թղթակցություններ մեզանից և ընդհանրապես՝ Կովկասից»[47]։ Ռ. Ս. Զեմլյաչկան գրում է, որ Բաքվում «հափշտակությամբ են կարդում «Վպերյոդ» թերթը։ Ես յուրաքանչյուր համարից նրանց ուղարկում եմ չորսական օրինակ»[48]։

1905 թ. մարտի սկզբներին Կովկասից Վ. Ի. Լենինին ուղարկված նամակներից մեկում ասված է. «Ունենք «Վպերյոդի» բոլոր համարները, ներառյալ

---

41 «Исторический архив», 1955, № 1, стр. 34.

42 Տե՛ս «Պրոլետարիատի կռիվը», 1905, № 5։

43 «Пролетарская революция», 1925, № 5, стр. 32.

44 Նույն տեղում, стр. 34.

45 Նույն տեղում, էջ 46։

46 Նույն տեղում, էջ 44—45։ Ինչ-ինչ պատճառներով, սակայն, այդ որոշումը իրականացնել հնարավոր չեղավ։

47 «Пролетарская революция», 1925, № 5, стр. 34.

48 Մի կուս. կենտ. արխիվ, ֆ. 25 և 26, ց. 2, գ. 36751 թ. 25.

№ 8-ը ... «Պե՞տք է արդյոք մենք կազմակերպենք հեղափոխությունը»[49] հոդվածը, այստեղ ֆուրոր է բարձրացրել, իսկ № 4-ի «Հեղափոխական օրերը»[50], ուզում են վերահրատարակել վրացերեն լեզվով։ Բոլորին էլ դուր է գալիս առաջնորդող հոդվածների պարզ և հասկանալի շարադրանքը...»[51]։

Ահա Անդրկովկասից թերթի խմբագրությանը հասցեագրված մեկ այլ նամակից մի հատված. «Վպերյոդը» չափազանց դուր է գալիս բոլորին, այդ մեզ շատ է ուրախացնում։ Ունենք բոլոր համարները...»[52]:

«Վպերյոդի» անդրկովկասյան ակտիվ գործակալներից ու թղթակիցներից մեկը՝ Մ. Ցխակայան նշում էր, որ շնորհիվ Լենինյան նոր թերթի, Անդրկովկասի բոլշևիկներին ծայրաստիճան պարզ դարձավ դրությունը կուսակցության ներսում և այն խնդիրները, որ մեր առջև դնում էր Լենինը[53]։

«Պրոլետարիի» լույս ընծայման առթիվ Վ. Ի. Լենինը գրում է «ՌՍԴԲԿ կենտրոնական օրգանի խմբագրության կողմից» նամակը և խնդրում, որպեսզի այն կարդացվի ու քննարկվի «կուսակցության անպայման բոլոր, մինչև ամենաստորին, կազմակերպություններում ու խմբերում»[54]։ Կենտրոնական օրգանի ավելի լայն տարածման, միասնական լոզունգներ ու տակտիկա ունենալու համար Լենինը առաջարկում էր տեղական հրատարակություններում արտատպել և կամ վերաշարադրել կենտրոնական օրգանի այս կամ այն հոդվածը[55]։ 1905 թ. սեպտեմբերի 15-ին Կովկասյան միութենական Կոմիտեն «Պրոլետարիի» խմբագրությանը ուղարկած նամակում խոստանում է իրականացնել այդ ցուցումը։ «Թանկագին ընկերներ, ձեր՝ օգոստոսի 27-ի թվակիր նամակը ստացանք։ Կ0-ի և տեղական հրատարակությունների կապի մասին ձեր առաջարկին լիովին համաձայն ենք։ Կարևորը Կ0-ի և նրա հոդվածների ու լոզունգների մասսայականացումն ու տարածումն է։ Հնարավորության չափ կաշխատենք անել այդ»[55]։

Կովկասյան միութենական կոմիտեն փայլուն կերպով կատարեց կենտրոնական օրգանին տված իր խոստումը։ Թերթի ստացման, տարածման ու նրա ազդեցության ոլորտի մեծացման համար արվում էր ամեն ինչ։ «Պրոլետարին» Անդրկովկասում ստացվում էր բազմաթիվ հասցեներով, արտասահմանից եկած ընկերների ու ծանրոցների միջոցով։

Օգոստոսի սկզբին ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն հատուկ նամակով խնդրում է «Պրոլետարիի» խմբագրությանը՝ թերթը ուղարկել խմբագրությանը նախապես հայտնի կովկասյան բոլոր հասցեներով[57]։ ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն սեպտեմբերին Կ0-ի խմբագրությանը գրում է, թե քանի որ «Պրոլետարիից» կատարվող արտատպությունները դեռևս քիչ են, ուրեմն անհրա-

---

49 Խոսքը Վ. Ի. Լենինի համանուն հոդվածի մասին է, որը տպագրվել է «Վպերյոդի» № 7-ում։

50 Խոսքը Վ. Ի. Լենինի համանուն խորագիրն ունեցող հոդվածաշարի մասին է, որը տպագրվել է «Վպերյոդի» № 4-ում։

51 «Пролетарская революция», 1925, № 5, стр. 49.

52 Նույն տեղում։ Ընդգծումը մերն է—Հ. Ի.։

53 Տե՛ս Մլի Կուս. կենտ. արխիվ, ֆ. 157, ց. 1, գ. 56, թ. 31։

54 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 9, էջ 366։

55 Տե՛ս նույն տեղում, էջ 365։

56 Մլի կուս. կենտ. արխիվ, ֆ. 26, ց. 29, գ. 10104, թ. 9։

57 Տե՛ս նույն տեղում, թ. 10։

Ժեշտ է ավելացնել Անդրկովկաս ուղարկվող թերթի քանակը, մինչև 20 օրինակ յուրաքանչյուր համարից[58]։

Բաքվի կոմիտեի պահանջը անհետևանք չմնաց։ «Պրոլետարիի» յուրաքանչյուր համարից Բաքու էր ուղարկվում ավելի քան 50-ական օրինակ[59], իսկ Կովկասյան միութենական և Թիֆլիսի կոմիտեները ստանում էին իրենց ներկայացրած բոլոր հասցեներով։ 1905 թ. մոտավորապես հոկտեմբեր ամսին վերաբերող արխիվային մի նամակում ասվում է, որ Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները չափազանց գոհ են «Պրոլետարիի» հոդվածներից և որ թերթը կարդացվում է ձեռքից-ձեռք անցնելով։ Հայտնվում է նաև, որ «...չնայած ունենք բոլոր համարները, բայց ափսոս որ օրինակները քիչ են»[60]։ Վ. Ի. Լենինի ցուցումով «Պրոլետարին» և կուսակցական գրականությունը Անդրկովկաս էր ուղարկվում ոչ միայն արտասահմանից, այլև Պետերբուրգից և Մոսկվայից։ Արխիվային փաստաթղթերից, օրինակ, երևում է, որ 1905 թ. օգոստոսին Մ. Մ. Լիտվինովը Բաքու է ուղարկել երեք փութ կուսակցական գրականություն[61]։

«Պրոլետարին», ինչպես նաև «Վպերյոդը» Անդրկովկասում մասսայականացվում էին ոչ միայն իրենց իսկ՝ թերթերի տարածմամբ։ Ընդհատակի պայմանները դրա համար փոքր հնարավորություններ էին ընձեռում։ Եվ Վ. Ի. Լենինի սովորեցրածի նման[62] կենտրոնական օրգանն ու նրա գաղափարները երկրամասի բոլշևիկները տարածում էին նաև տեղական հրատարակությունների միջոցով։ Շատ հաճախ արտատպվում էին «Վպերյոդի» և «Պրոլետարիի» նյութերը (հատկապես Լենինի գրչին պատկանող հոդվածները և կուսակցական փաստաթղթերը) երկրամասի բոլշևիկյան պարբերական մամուլի օրգաններում, կամ հրատարակվում ու տարածվում էին առանձին թերթիկներով որպես թռուցիկներ։

Անդրկովկասի համար բոլշևիկյան մամուլի կարևոր օրգաններ հանդիսացան «Վպերյոդն» ու «Պրոլետարին», որոնք Լենինյան խոսքն ու ցուցումները հասցնում էին երկրամասի կուսակցական կազմակերպություններին ու աշխատավորությանը։

РОЖДЕНИЕ ГАЗЕТ «ВПЕРЕД» И «ПРОЛЕТАРИЙ» И ИХ ПРОНИКНОВЕНИЕ В ЗАКАВКАЗЬЕ

Г. А. ИСААКЯН

Резюме

Борьба внутри партии после II съезда РСДРП еще более обострилась. Меньшевикам удалось захватить в свои руки центральный орган, Центральный Комитет и Совет партии.

Кавказские агенты меньшевиков стремились также взять в свои руки руководство Кавказского союза РСДРП и его местные организации.

58 Տե՛ս նույն տեղում, գ. 1009 ց. 35, թ. 6։

59 Տե՛ս Մլի կենտր. կուս. արխիվ ֆ. 26, ց. 29, գ. 19729։

60 Տե՛ս նույն տեղում, ֆ. 26, ց. 28, գ. 1110։

61 Տե՛ս «Партия в революции 1905 г.», 1934, стр. 228։

62 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 9, էջ 364—365։

Для большевиков создалось чрезвычайно тяжелое положение, которое усугублялось также и тем обстоятельством, что большевики в это время были лишены такого средства связи с партией и массами, каковым являлась массовая политическая газета.

Усилиями большевиков в Женеве 22 декабря 1904 г. (4 января 1905 г.) вышла в свет газета «Вперед», которая стала как для всей партии, так и для местных организаций РСДРП Закавказья средством пропаганды для созыва III съезда РСДРП. Кавказский союзный комитет РСДРП с целью поддержки издания газеты создал литературную группу.

Газета «Пролетарий» была создана решением III съезда РСДРП и начала выходить с 14 (27) мая 1905 г.

Члены большевистских партийных организаций Закавказья, как и многие рабочие, посылали в редакцию газет «Вперед» и «Пролетарий» многочисленные письма, корреспонденции и статьи, значительная часть которых публиковалась.

Эти газеты распространялись также в Закавказье, особенно в рабочих районах края и имели значительное влияние на подъем революционного движения.